

Պ. Հախոբյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

(ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՓԱՍՏԵՐ)

ԻՐ դեմոկրատական-լուսավորական հայացքներով և քաղաքական դավանանքով խաչատուր Արուստիսը կապված է ռուսական առաջավոր կուլտուրայի հետ, որի նկատմամբ նա ցուցաբերել է բազմակողմանի հետաքրքրություն։ Ռուսական կուլտուրայի և գրական-հասարակական գործիչների հետ Արուստիսի ունեցած կապերը մինչև այժմ, մեծ մասամբ, ներկայացվել են հայտնի մի քանի փաստերի հիման վրա (Արուստիսի հանդիպումը Ժուկովսկու հետ, Արուստիսի ընդհարումը Բուլգարինի հետ, Կոնյուկի մի քանի առակների փոխադրման փաստը և մի երկու այլ փաստեր)։ Ահա թե ինչու կարևոր նշանակություն են ստանում ռուսական առաջավոր կուլտուրայի հետ Արուստիսի ունեցած կապերը բացահայտող նոր փաստերը։ Թեև Արուստիսի նամականիի և օրագրերի նշանակալից մասը կորել է, այնուամենայնիվ մնացել են մի շարք չուսումնասիրված փաստեր՝ ցրված զանազան թղթերի և Դորպատյան օրագրերի էջերում, որոնք ի մի հավաքվելով բավական նյութ են տալիս ռուսական կուլտուրայի հետ Արուստիսի ունեցած կապերի լուսաբանման համար։

Ձգտումը դեպի ռուսական առաջավոր կուլտուրան, ցանկությունը հիմնավորապես տիրապետելու ռուսաց լեզուն՝ Արուստիսի մեջ եղել է դեռ 20-ական թվականներից։ «Այց Անիի ավերակներին» ուղեգրության մեջ Արուստիսը գրում է. «1821 թվականին Անտոն արքեպիսկոպոսը տարավ ինձ... Թիֆլիս, հայկական վարժարանը, գիտությունները վերջացնելու և ռուսաց լեզուն ուսումնասիրելու համար»¹։ Արուստիսն ասում է, որ աշխարհագրությունից այդ ժամանակ ինքն իմացել է երեք անուն, որոնցից մեկը եղել է Մոսկվան. նրան էլ ճձգտել է հոգիս հմայիչ ուժով»,—գրում է նա նույն տեղում։

Ներսիսյան դպրոցում Արուստիսը ոչ միայն սովորել է ռուսերեն գրել-կարդալ, այլև 1826 թ. նոյեմբերի 3-ին Կարամզինի ճանապարհորդությունից թարգմանել է մի հատված²։

Արուստիսը ցանկացել է Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո մեկնել Ռուսաստան՝ ուսանելու համար, սակայն ռուս-պարսկական պատերազմի հետևանքով չի կարողացել իրագործել իր այդ մտադրությունը։

¹ Խ. Արուստիսի Արիփ, № 23, որը այսուհետև կրճատ նշանակում ենք՝ ԱԽԱ։

² Արուստիսի այդ թարգմանությունը իբրև հավելված կցված է Ա. Գուլամիրյանի հրատարակած «Գավիթ բեգ» գրքին. «Ի նամակագրութենէ ռուս ճանապարհորդին, այսինքն պարոն Կարամզինու, յամի 1790 ի Փարիզ վերնագրով։ Վազարշապատ, 1871 թ., էջ 81—83։

Պատերազմի ավարտումից հետո նա դարձյալ փորձում է մեկնել Ռուսաստան։ Հեղինակի արխիվում պահպանվել է Աղաջան Շերմազանյանի 1828թ. փետրվարի 29-ի նամակը, որից տեղեկանում ենք, որ Արուսյանը դիմել է Մոսկվա, մեզ անհայտ ինչ որ անձնավորության՝ խնդրելով օժանդակել իրեն, որպեսզի ուսանի Մոսկվայում։ Շերմազանյանը հաղորդում է Արուսյանին, որ Մոսկվայից եկած Քեթխուզովի որդին հայտնել է իրեն, որ գործը գլուխ չի եկել¹։ Նամակը Ա. Շերմազանյանը ուղարկել է Հաղպատ, ուր այն ժամանակ գտնվում էր Արուսյանը։

1828 թ. ապրիլին Արուսյանը Հաղպատից մեկնում է Էջմիածին։ Այստեղ նա փորձում է վանքի և կաթողիկոսի միջոցով հաջողեցնել Ռուսաստանում ուսանելու գործը, սակայն նրա դիմումները մնում են անհետևանք։ Հետագայում՝ Դորպատյան օրագրերում, 1834 թ. սեպտեմբերի 5-ին նա գրել է. «Լսելիք հոգևորականաց մերոց ծանրացեալ էին ի խնդրատուութեանց իմոց առաքել զիս անդ (= Ռուսաստան.—Պ.Հ.), ուր և յուսայի գտանել սակաւ ինչ օգնութիւն առ ունիցէ՝ առ հայս և առ ռուսս և յայլ օտարս, դիմէի անդ անահ, աներկիւղ, խնդրելով միջոց միայն գնալոյ ի Ռուսաստան»²։

Էջմիածնում և հայրենիքում ապրած տարիներին Արուսյանն ունեցել է մի շարք ռուս ծանոթներ, որոնցից մեկը, ոմն Ֆադեյ Յիվինսկի, հետագայում Արուսյանին նամակներ է գրել Դորպատ՝ տեղյակ պահելով նրան Հայաստանի անցուղարձին³։

Ռուս-պարսկական պատերազմից, ինչպես և Հայաստանի ազատագրումից հետո Անդրկովկասում էին գտնվում մի շարք ռուս գործիչներ, այդ թվում Դրիրոնեգովը, Բնական է, որ Արուսյանը չփվել է նրանցից շատերի հետ։ Հատկապես Դրիրոնեգովին Արուսյանը ճանաչել է։ Մինչև այժմ մեր ձեռքում չկային Արուսյանի և Դրիրոնեգովի կապը հաստատող փաստեր։ Այնինչ, Դորպատյան օրագրի 1832 թ. հուլիսի 30-ի գրանցումից երևում է, որ Արուսյանը Դորպատում, Կարամզինի որդիների հետ զրույց է ունեցել ռուս-պարսկական պատերազմի և Դրիրոնեգովի մասին. «—Ջրոյց վասն պարսից. արհամարհանք վասն նոցա, Դրիրոնեգով...»⁴ ժլատ կերպով գրանցել է Արուսյանը։ Բացի դրանից ռուս-հայերեն ընդարձակ քերականության մեջ, ուր շատ սեղմ կերպով թվարկված են ռուս ժողովրդի պատմության կարևոր իրադարձությունները, Արուսյանը հիշատակել է Դրիրոնեգովի ողբերգական մահվան դեպքը. «Սպանութիւն դեսպանին ռուսաց ի 31 յունի. կատաղութեամբ խաժամութիւն»⁵։ Այս փաստերը ցույց են տալիս, որ Արուսյանը ճանաչել է Դրիրոնեգովին և հետաքրքրվել նրա անձով ու գործով։ Արուսյանի ուսուցիչ Հ. Ալամդարյանը ծանոթ է եղել գեկարրիստների հետ։ Հնարավոր է, որ Արուսյանը ևս ծանոթ էր նրանց։

20-ական թվականների վերջերից Արուսյանը ջանասիրությամբ ուսումնասիրում է ռուսաց լեզուն և գրականությունը։ Ինչպես տեղեկանում

¹ ԱԽԱ № 380։

² ԱԽԱ № 16 ա։

³ ԱԽԱ № 360, գրված 1831 թ. հուլիսի 28-ին։

⁴ ԱԽԱ № 16 ա։

⁵ ԱԽԱ № 27 ա թերթ 277։

ենք Առաքել Արարատյանի 1829 թ. գրած մի նամակից, Արուստիանը շարունակ Մոսկվայից գրքեր է պահանջել՝ իր ձեռքի տակ ունենալով «Реестр российским книгам» տեղեկատուն։ Նա հետաքրքրվել է ռուս գրականության նորութիւններով։ 1829 թ. Մոսկվայում էր ուսանում Ներսիսյան դպրոցից Արուստիանի դասընկեր Ա. Սմբատյանը։ Արուստիանը նամակագրութիւն է ունեցել վերջինիս հետ, հետաքրքրվել Մոսկվայի անցուղարձով և խորհուրդներ հարցրել Մոսկվայում իր ուսանելու հնարավորութիւն մասին¹։

Մինչև 1829 թ. վերջը, այն է՝ Պարրոտի գալն ու գնալը չի վճռվում Արուստիանի Ռուսաստանում ուսանելու գործը։ Բոլոր կողմերից հույսը կըտրած, Արուստիանը 1829 թ. դեկտեմբերի 5-ին թողնելով վաճառում իր պաշտոնը, հայրենիքը, հարազատներին, բռնում է Ռուսաստան տանող ճանապարհը։ Վերադառնալու և թաղանչ հանելով հայէի ի տարածեփ երկնամբարձ շղթայս Կովկասեան և հոգի կենաց իմոյ յուսայի միմիայն ի հիսսիսային հողմոյ ստանալ, այն զի հարաւն ինձ միմիայն բարբարոսութիւն և տգիտութիւն շնչերս²։

Նրա նպատակն էր մի կերպ հասնել Մոսկվա կամ Պետերբուրգ և մըտնել այնտեղի բարձրագույն դպրոցներից մեկը։ Այդ է վկայում կայսերն ուղղված խնդրագրի սևագիրը ֆնացորդը, ուր Արուստիանը գրում է. «Հրամայեսցիք գալ ի լուսաւորեալ համալսարան ձերոյ կայսերական ի Մոսկվա կամ ի Ս. Պետերբուրգ»³։ Այդ է հաստատում Պատկերիչին մատուցած Արուստիանի դիմումը՝ 1830 թ. մարտի 31-ին, որով խնդրում է իրեն ուղարկել «Մոսկվայի կամ Ս. Պետերբուրգի համալսարանը ուսանելու ուսաց լեզուն և այլ գիտութիւններ»⁴։

Ինչպես հայտնի է, Պարրոտի միջամտութիւնով կարգավորվում է Արուստիանի ուսման գործը, սակայն Արուստիանի ցանկութիւնը հակառակ։ Նա պիտի ուսաներ ոչ թէ Մոսկվայում կամ Պետերբուրգում, այլ Դորպատում, ոչ թէ որեւէ բարձրագույն դպրոցում, այլ առանձին ծրագրով պիտի պատրաստվեր ուսուցչական կոչման։ [Այսպիսով, Արուստիանին հնարավորութիւն չի տրվում սովորելու Մոսկվայի կամ Պետերբուրգի համալսարանում]։

1830 թ. հուլիսին Արուստիանը Թիֆլիսից ուղևորվում է Դորպատ։ Ճանապարհին նա կանգ է առնում Մոսկվայում և Պետերբուրգում, ուր ձեռք է բերում նոր բարեկամներ, ստանում է նոր տպավորութիւններ։ Օգոստոսի 25-ին նա արդեն Պետերբուրգում էր։ Նրան հյուրընկալել է մի ռուս Պյոտր Պրոխորիչը, որի մասին գովասանքով է խոսում Արուստիանը իր օրագրում։ Պետերբուրգում Արուստիանն առաջին անգամ դիտում է ռուսական թատրոնը, որը «մեծ ներգործութիւն ետ սրտի իմոյ» գրում է նա իր օրագրում, 1830 թ. օգոստոսի 26-ին⁵։ Մոսկվայում և Պետերբուրգում անց-

¹ Տե՛ս Խաչատուր Արուստիանի դիման, հատոր 2, 1948 թ. էջ 75—76։

² ԱԽԱ № 16ա, 1834 թ. սեպտեմբերի 5-ի գրանցումը։

³ Դիման Խաչատուր Արուստիանի, 1940 թ. հատոր 1, էջ 201։

⁴ Դիման, հատոր 2, 1948 թ. էջ 211։

⁵ Արուստիանի օրագրից 1830 թ. օգոստոսի 25-ի և 26-ի գրանցումները առաջին անգամ հրատարակել է Ն. Տեր-Վարապետյանը «Խաչատուր Արուստիան» գրքում, 1897 թ., Թիֆլիս, էջ 31—33։

կացրած մի քանի օրերը և ողու մարդկանց հետ ունեցած շփումը այնպես են ոգևորում Արուստյանին, որ նա Դորպատ մեկնելու ճանապարհին հորինում է «Մուտ Հայկայ ի Հայաստան և արհաւիրք երեւակայութեան» րանաստեղծութիւնը, ուր գովարանում է ողու ժողովրդին, որպէս Հայաստանի փրկչի: Հայկը դիմում է հեթանոսական աստվածներին՝ օրհնել ողու ազգին, որը մեծ բարիքներ և ճանտրիտուր շնորհ երախտեաց է տւել հայ ժողովրդին՝ դառնալով «խնամածոյ մեր և պաշտպան»:

1830 թ. սեպտեմբերից սկսւում է Արուստյանի կյանքի դորպատյան շրջանը: Այստեղ գիտելիքներ ուսանելու հետ միասին նա ուղադրությամբ հետևում է ժամանակի հասարակական, քաղաքական անցուդարձերին: 1830 թ. նոյեմբերին նրան է հասնում ֆրանսիական ռեուլցիայի լուրը¹. 1831 թ. բռնկւում է նաև լեհական ապստամբութիւնը: Նույն ժամանակ սկսւում են դյուղացիական խռովութիւնները Մերձքալթիկայում: 1831 թ. սեպտեմբերի 29-ի օրագրային գրանցումից իմանում ենք, որ Շվեդի տանը Արուստյանը զրուցել է «Վասն պատերազմին Պօլշիոյ»: Նույն հարցի մասին նա զրույց է ունեցել նաև ուրիշների հետ սեպտեմբերի 30-ին, դեկտեմբերի 8-ին և 18-ին և ուրիշ անգամներ: 30-ական թվականների սկզբին հուզումներ էին նկատւել նաև ուսանողության մեջ: Դորպատի համալսարանում գործելիս է եղել ուսանողական դադտնի խմբակ: 1831 թ. սեպտեմբերի 22-ի գրանցումից իմանում ենք, որ Պարրոտը խրատել է Արուստյանին հեռու մնալ «Վասն զգոյշութեան յընկերակցութենէ զանազան ստուգենտաց»:

Այս և այլ օրագրային գրանցումներից երևում է, որ Արուստյանը հետաքրքրւել է ժամանակի ռեուլցիոն շարժումներով, այդ բանը անշուշտ զգալի դեր է խաղացել նրա ազատական գաղափարների ձևաւորման գործում:

1831 թ. դեկտեմբերի 13-ի օրագրային գրանցումից իմանում ենք, որ Արուստյանը Վ. Ֆեոդորովի հետ զրույց է ունեցել Մոսկւայի և Պետերբուրգի համալսարանների մասին և բացասաբար արտահայտւել այն ճշնշումների վերաբերյալ, որ ցարական կառավարութիւնը գործադրում էր ուսանողների վրա:

Դորպատում Արուստյանը ողուաց լեզվի մեջ կատարելագործւելուց բացի հետաքրքրւում է ողու ժողովրդի սովորութիւններով ու կենցաղով: Պարրոտի ազգականուհի Յուլիան մի անգամ պատմում է նրան ողուների հարսանեկան սովորութիւն մասին, որն Արուստյանը ամբողջությամբ վերապատմել է իր օրագրում²: Արուստյանը Դորպատում շփւել է ողու ուսանողների հետ: Նույն թվականի դեկտեմբերի 22-ի գրանցումից իմանում ենք, որ նա մտերմացել է Բերեզին ազգանունով մի ողու ուսանողի հետ: Բերեզինը Արուստյանի համար նվագել է դաշնամուրի վրա ողուական ժողովրդական երգեր: Բրենց լիւրիկական ջերմությամբ աչքի ընկնող և սրտառուչ այդ երգերը այնպես են հուզել Արուստյանին, որ վերջինս չի կարողացել զսպել իր արտասուքները:

¹ Տես Մ. Սալանթյանցի նամակը Արուստյանին 1830 թ. նոյեմբերի 16-ին: ԱԽԱ № 324:

² ԱԽԱ № 16. 1831 թ. հոկտեմբերի 26-ի գրանցումը:

Աբովյանը Դորպատում 1831 թ. վերջերից հաճախում է «Ջեմինարը» կամ «Ճեմարանը», որը ոչ այլ ինչ էր, բայց եթե Դորպատի նահանգական գլխավորն էր Այգ գլխավորում ռուսաց լեզու էին դասավանդում Տիխովինսկին և Պրայսը։ Աբովյանը հաճույքով է լսել նրանց դասախոսությունները։ Պրայսին նա հիշում է 1831 թ. դեկտեմբերի 18-ի օրագրային գրանցման մեջ։ Պրայսը եղել է ռուսական հերոսական էպոսի՝ «Ասքի» և սլավոնական ժողովրդական երգերի խոշորագույն հետազոտող ու գիտակ։ Նա թողել է արժեքավոր ժառանգություն։ Աբովյանի՝ ռուսական ժողովրդական երգերով հետաքրքրվելու գործում դեր է խաղացել նաև Պրայսը։

1831 թ. վերջերից Աբովյանին այլևս չէին բավարարում այն առարկաներն ու տարրական գիտելիքները, որոնք ավանդում էին այլ ուսուցիչներ ու պրոֆեսորներ։ Դեկտեմբերի 21-ի գրանցումից իմանում ենք, որ Աբովյանը այդ օրերին ցանկություն է ունեցել Պետերբուրգ մեկնելու, սակայն հնարավորություն չի ունեցել իրագործելու իր այդ մտադրությունը։ Հավանաբար, Աբովյանը Պետերբուրգ պիտի մեկներ՝ իր ուսման գործի մասին ծանոթների հետ խորհրդակցելու։

1832 թ. հունվարի 19-ի գրանցումից իմանում ենք, որ Աբովյանը վերջին անգամ փորձ է անում և խնդրում է Պարրոտին՝ պարզել իր ապագան։ Աբովյանի ցանկությունն էր հիմնավոր գիտելիքներ ձեռք բերել, իսկ Պարրոտը մերժում էր ասելույլ. «Դուք ջանացարուք ուսանիլ զայն ամենայն, որ պիտոյ են ուսուցչի միտ... կացեք ի գիտաւորութեան ձերում հաստատուն և հանգստեամբ ջանացարուք ուսանիլ զայն ամենայն, որ հայի ի նպատակ Ձեր. ես ոչ տամ խորհուրդ զմեծամեծ գիտութիւնս»։ Այդ օրից սկսած Աբովյանն այլևս Պարրոտի հետ չի խոսում համալսարանական դասընթաց անցնելու մասին և սկսում է սահմանյալ ժամերից դուրս ինքնակրթությամբ ձեռք բերել այն ամենը, ինչ չէին ավանդում իրեն։ Նա սկսում է ավելի հաճախ հանդիպել ռուս ուսանողների հետ, նրան հետաքրքրում են ռուս նշանավոր գործիչները։ Դորպատյան բարեկամներից մեկի հետ 1832 թ. հունվարի 2-ին Աբովյանը զրուցել է ռուս մեծ գորավար Սուլժորովի և ռուսական ազգային ռազմական գիտության մի այլ նշանավոր ներկայացուցչի՝ Պ. Ա. Ռումյանցևի մասին։ Համալսարանի դասախոս Տիխովինսկու հետ Աբովյանը փետրվարի 1-ին զրուցել է զանազան հարցերի մասին։

1832 թ. ամառը Աբովյանը կատարում է առաջին ճանապարհորդությունը Մերձ-Բալթիկայով։ Հունիսի 15-ին նա եղել է Ռիգայում, ուր նրան հիացմունք է պատճառում Նապոլեոնի դեմ տարած ռուս ժողովրդի մեծագույն հաղթանակը հավերժացնելու համար կառուցված հոյակապ կոթողը։ Աբովյանին հետագայում էլ հետաքրքրել է ռուս ժողովրդի 1812 թ. հայրենական պատերազմը։ Այգ մասին նա գրել է առանձին աշխատություն «Ալեքսանդր կայսրը Փարիզում և Նապոլեոնի անկումը» վերնագրով¹, ուր փառաբանում է ռուսալիան բանակը՝ և հռչակավոր գորավար Կուտուզովին։ Կուտուզովի մասին Աբովյանը գովասանքով է խոսել նաև ռուս-հայերեն ընդարձակ քերականության մեջ։

¹ Այս տակավին անտիպ աշխատությունից որոշ հատվածներ հրատարակվել են Ն. Մուրադյանի «Աբովյանը Նապոլեոնի 1812 թ. արշավանքի մասին» վերնագրով հոդվածում, տե՛ս «Սովետական գրականություն», 1941 թ. № 9—10, էջ 70—71։

1832 թ. կեսերին Արուսյանը Դորպատում ծանոթանում է ռուս գրող Կարամզինի որդիների հետ, որոնք եկել էին տեղի համալսարանում սովորելու։ Նրանց հետ, ինչպես նշել ենք, Արուսյանը զրուցել է մեծահռչակ Դրիստեդովի մասին, արտահայտելով իր նողկանքն ու արհամարհանքը Գրիբոեդովին սպանողների հանդեպ։ Կարամզինի որդիների հետ Արուսյանը հետագայում ավելի է մտերմանում։ 1833 թ. մայիսի 5-ի գրանցումից իմանում ենք, որ նրանք միասին զրոտնելու են գնացել Դորպատի մերձակայքում գտնվող Ռուբկոյ անտառը, լսել են ռուս ուսանողների երգերը, իրենք էլ մասնակցել են երգեցողությանը և ուշ երեկոյան երգելով վերադարձել քաղաք։ 1833 թ. սեպտեմբերի 3-ին պրոֆեսոր Բլումբեի տանը Արուսյանը հանդիպում և ծանոթանում է ռուս նշանավոր գրող Վ. Ա. Ժուկովսկու հետ։ Արուսյանի օրագրի համապատասխան հատվածը մի քանի անգամ հրատարակվել է և մենք մանրամասնություներով վրա կանգ չենք առնում։

Ինչպես պարզվում է նոր փաստերից, Արուսյանը հետագայում Ժուկովսկու հետ ունեցել է նամակագրություն։ Նրա արխիվում պահպանվել է Ժուկովսկուն ուղղված նամակներից մեկը՝ գերմաներեն լեզվով, ուր գրում է.

«Դեռ Ասիայի խորքերում ես ճանաչեցի Ձեր արժանիքը։ Տակավին մանկական նիրհի մեջ Ձեր անունը իմ սրտում առաջացրել է ազնիվ զգացմունքներ ու հուզումներ։ Ես պիտի իմ զգացմունքները ուժով զսպեմ, որպեսզի կարողանամ նկարագրել կարոտով լի հիացմունքս, որ ես բախտ ունեցա անձամբ Ձեզ հետ հանդիպելու։ Ինձ պակասում են բառերը։ Ձեր հիշատակը ես պիտի պահեմ իմ հոգու խորքում և նախապատրաստվեմ այն երջանկությանը, որին իմ ազգը պիտի արժանանա, երբ իմանա, թե ում հետ եմ ես այստեղ ծանոթացել։ Այսօր գուցե և վերջին անգամը իմ կյանքում անցնում եմ Ձմեռային պալատի առջևով։ Ձերմ արցունքները, որոնք թափվում են իմ աչքերից, հանդիսանում են այն սքանչելի հիշողությունների արդյունքը, որոնք այնքան շատ հրաշալի պատկերների հետ միասին Ձեր թանկագին կերպարանքն ևս դարձրին հայրենիք ուղևորվելիս ինձ համար կյանքի ուղեցույց...

Այն, ինչ եղել էք ինձ համար, ես այս աշխարհում ոչ մի բանի հետ չեմ կարող համեմատել։ Եղեք բախտավոր այն երկրում, որը Ձեզ փառաբանել է...»¹

Ժուկովսկու մասին Արուսյանի արած այս հիացական արտահայտությունները հարկավ՝ վերաբերում են ոչ միայն նրա անձին, այլև ռուս ժողովրդի հզոր գրականությանը, դրի նշանավոր ներկայացուցիչներին մեկն էր վերջինս։

¹ Այս փաստը առաջինը հիշատակել է Ն. Տեր-Կարապետյանը, տե՛ս նրա «Ն. Արուսյան» գիրքը, 1897 թ., էջ 73։

² Ժուկովսկուն գրած Արուսյանի այս նամակը սևագիր է։ Պահպանվել է հեղինակի արխիվում № 122 (հին)։ Նամակը անթվակիր է։ Գրության մոտավոր ժամանակը 1836 թ. սկիզբն է (հունվարի 2-րդ կեսը)։ Այն ժամանակ, երբ հայրենիք վերադառնալիս կարճ ժամանակով Արուսյանը կանգ առավ Պետերբուրգում, ինչպես երևում է, ի թիվս այլ բարեկամների, այցելել է նաև Ժուկովսկուն։ Մեջ բերած հատվածները թարգմանել ենք մենք։

Դորպատյան շրջանում ռուս գրական գործիչներին և ռուսանողության հետ Աբովյանի ունեցած շփումը պատահական բնույթ չի կրել։ Դա ռուս գրականության և գիտության նկատմամբ Աբովյանի ունեցած սիրո և բազմակողմանի հետաքրքրության արտահայտությունն է։ Դորպատյան օրագրերի ժլատ գրանցումներից իմանում ենք, որ Աբովյանը ռուսաց լեզու էր սովորեցնում դորպատյան ծանոթներին։ 1832 թ. հունվարի 2-ից Աբովյանը ռուսերենի դասեր էր տալիս Ռուդոլֆ Էշնոլց անունով մի պատանու, 1833 թ. դեկտեմբերից ինչ-որ գրաֆի որդու, իսկ 1834 թվականից պաստոր Գեհեվեի որդուն։ Գրաֆի տանը դասերը շատ հաճախ ընդհատվել են ռուսական ժողովրդական երգերով, որոնց կատարմանը մասնակցել է Աբովյանը¹։

1834 թ. մայիսի վերջին մասնավոր ուսուցման իրավունքի համար Աբովյանը, ի թիվս այլ առարկաների, քննություն է հանձնել նաև ռուսաց լեզվից՝ Դորպատի համալսարանի դասախոս Տիխովինսկուն։ Քննությունը անցել է հաջող։ Այդ ժամանակ Աբովյանի ուսման ժամկետը համարյա լրացել էր։ Իր ետ գցած փողերով Աբովյանը մի տարի ևս մնում է այնտեղ, այս անգամ զբաղվելով միայն իրեն հետաքրքրող գիտություններով ու հարցերով։ 1834 թ. հունիսի 10-ին՝ Ներսեսին ուղղված նամակում Աբովյանը գրում է. «Հոկտեմբերից մինչև հունվար ես ուզում եմ մնալ Պետերբուրգում կամ Մոսկվայում, ռուսերենը կատարելապես սովորելու համար»²։ Դորպատյան պրոֆեսորները Աբովյանին զրկել էին իսկական գիտության լույսից։ Նույն նամակում Աբովյանը գրում է. «Այժմ եմ բացվում իմ աչքերը՝ հրճանքով ուսանելու գիտություններն ու մակացությունները. աչքեր, որ մինչև այժմ փակված էին ինձ համար»³։

Իսկական լույսը Աբովյանը կարող էր ստանալ միայն ռուսական միջավայրում, որը դորպատյանի համեմատությամբ շատ ավելի առաջավոր էր, ուր կար աշխույժ գրական-հասարակական պայքար։ Հենց դրա համար էլ նրա ոգին ձգտում էր դեպի Պետերբուրգ և Մոսկվա։ 1834 թ. աշնանը Աբովյանին է հասնում իր ուսուցիչ Հ. Ալամզարյանի մահվան լուրը։ Ռուսական թերթում նրա մասին հոգված տպագրելու կապակցությամբ Աբովյանը ընդհարվում է մոլի ռեակցիոներ և ցարական Յ-րդ բաժանմունքի գործակալ Ֆ. Բուլգարինի հետ։ Բուլգարինի երգիծական պորտրեն Աբովյանը հաջող կերպով վերարտադրել է իր դորպատյան օրագրում, որը մի քանի անգամ հրատարակվել է⁴։ Ալամզարյանի մահվանը հաջորդում է իբր հոր՝ Ավետիք Աբովյանի մահվան լուրը։ Աբովյանն ընկնում է վշախ ու հուսահատություն մեջ, խուսափում է մարդկանցից՝ մենության մեջ սգալով իր ծանր կորուստը։ Նրան մխիթարում են ընկերներն ու բարեկամները, որոնցից մեկը իր ռուս ընկերն էր՝ Դորլով ազգանունով⁵։

1834 թ. դեկտեմբերին վիշտն ամօքելու, ինչպես նաև ռուսերենի մեջ հմտանալու, մայրաքաղաքի գրական-հասարակական կյանքին և ռուս ժո-

¹ ԱԽԱ № 16 ա, 1833 թ., դեկտեմբերի 12-ի գրանցումը։

² Դիվան Խաչատուր Աբովյանի, Դատ. 2-րդ, էջ 23։

³ Նույն տեղում, էջ 21։

⁴ Այս մասին առաջին անգամ գրել է Ն. Տեր-Կարապետյանը իր «Ս. Աբովյան» գրքում, Թիֆլիս, 1897 թ., էջ 77։

⁵ ԱԽԱ № 16 ա, վերջին էջը։

դուրդի կենցաղին մոտիկից ծանոթանալու նպատակով Արուսյանը ուղե-
վորվում է Պետերբուրգ: Իր ճամբորդական խոհերը նա վերաբառադրել է
«Ի հրատազնապ եռանդս սրտիս մատչիմ անհամբեր» երկարաշունչ բա-
նաստեղծության մեջ, ուր ներկայացրել է իր փոթորկուն ներքնաշխարհը,
հուզված ու շտապողական վիճակը և ոուս կուլտուրայի հուշարձաններ
նկատմամբ ունեցած հիացմունքը: Ամենի ձիերը առաջ են տանում սահ-
նակը, ձյան փաթիլները դիպչում են Արուսյանի դեմքին, իսկ մտքով՝ մե-
կը մյուսի հետևից անցնում են Պետրականի Վրձանակերպ հրաշքները:

Ի թանձր շամանդաղ անդ քողածածուկ դիմօք մառնամուխ
Դնին ապարանք կրկէսք, ամբարտակք, ամրոցք երկնանման,
Գոլորշի ծովուն, մուխ ծխաբարձից մթին խառնամբոխ,
Կուտակին ի վեր սխնածև ի յամպս իբր շունչք դիւթական.
Բրգունք լուսանկարք, գմբէթք ոսկէձոյլք զաղաթք արձանաց,
Հրոսան ասա ի վեր փոփոխ վերբերմամբ ի ծովոյս միզապատ,
Մինն յոխորտայ, միւսն խոնարհի, մինն մերձենայալ ոմն թաղչի
Շ ուք տալով միմեանց, լեալ ողջունարեք սիրով անանջատ.
Անդ զրոշակք նաւոց երփներանդ թերթեալ ի թեւ հողմոց
Ճոճին մշտաշարժ ի յայս կամ յայն կոյս դիւրամէտ սահեալ...¹

Նախահանգստում կանգնած նավերը Արուսյանը համեմատում է ան-
ծայր անտառի հետ: Ամեն կողմից նրան դեմ են ելնում նոր հրաշակերտ-
ներ և բանաստեղծը հիացմունքով մտնում է «Տիեզերասաստ» հզոր ազգի՝
Ռուսիայի մայրաքաղաքը:

Դեկտեմբերի վերջին Արուսյանն արդեն Պետերբուրգում էր: Ռուսա-
կան կուլտուրայի կենտրոնը այս անգամ Արուսյանին տվեց շատ ու շատ
քան: Պետերբուրգը բարերար ազդեցություն ունեցավ նրա հայացքների ու
պոեզիայի վրա: Այստեղ Արուսյանը հանդիպում է իր հայրենակից Եզնակ
Կամսարականին և նրա ցանկության ընդառաջելով գրում է մի քանի աշ-
խարհաբար բանաստեղծություններ: Պետերբուրգում Արուսյանը մոտիկից
ծանոթանում է ռուսական կուլտուրային, ռուսական ժողովրդական երգե-
րին, որոնց ոգով հետագայում գրում է մի քանի բանաստեղծություններ:
Վերջիններից խիստ ուշագրավ է «Տաղ ի գոյն Не шей ты мне матушка»
(«Վարեմ սրտիս կսկիծը լեզվով քեզ պատմել») երգը՝ դրված ռուսական
ժողովրդական [«Не шей ты мне матушка»] հանրահայտ երգի եղանա-
կով ու չափով: Ռուսական ժողովրդական հիշյալ երգը շատ է տարածված
եղել ինչպես [անցյալում] Արուսյանի ժամանակ, այնպես և այժմ: Այդ եր-
գը մշակել է ի թիվս այլոց նաև մեծահանձար Գլինկան:

Не шей ты мне, матушка, красный сарафан.
Не входи, родимая, попусту в изъясн!
Рано мою косыньку на две расплестать!
Прикажи мне русую в ленту убирать!

.....

¹ Խ. Արուսյան, Երկերի լրակատար ժողովածու, հատոր 1-ին, Երևան, 1948 թ., էջ 104:

² Այս փաստը առաջինը նկատել է Ա. Ղուրբանյանը, որը, սակայն, միայն հիշատա-
կել անցել է. ռուսական ժողովրդական երգի վերնագիրը բերել է «Не шей мне матуш-
ка» ձևով՝ բաց թողնելով «ты» բառը: Տես «Սովետական գրականություն», 1940 թ., № 3,
էջ 161:

Золотая волюшка мне милей всего—
Не хочу я с волюшкой в свете ничего...

(Русские народные песни,
сб. III, Москва 1937 г., стр. 70)

Ռուսական հանրահայտ երգում մենք լսում ենք գառն մորմոքը շահել ազնվա, որին շատ վաղ ուզում են կարմիր շրջագգեստ հագցնել և ամուսնացնել՝ մշտապես զրկելով ազատությունից: Աբովյանին գրավել են այդ երգի և՛ ներքին լիրիկական հարստությունը և՛ նրա երաժշտությունը: Այս երգը հենց այնպիսի Վերտի բաներից էր, որոնց մասին մեծ լուսավորիչը խոսել է հետագայում՝ անմահ Վերք Հայաստանի-ի առաջաբանում: Ստորև բերում ենք ռուսական ժողովրդական երգի մոտիվով Աբովյանի գրած «Կարեմ սրտիս կսկիծը յեզվով քեզ պատմել» բանաստեղծության վերջին մասը, ուր ցայտուն կերպով երևում է ռուսական երգի ազդեցությունը.

Հուսինն պայծառ անմահն փայլի երկնքից
Նրա լույսով բոլոր աշխարհը ցնծա խնդալից:
Բայց իմ կարոտ աչք ու սիրտ արտասուս արյան
Ծփին դառնագին, ցավոք ի խորս տրտմություն:
Բացվիր, իմ լուսին բացվիր, միայն քո տեսություն
Կարե իմ բոլոր ցավերն տանել ու բառնալ:
Ախ թե սերն իմ մարմինը մոխիր դարձնի,
Կաթի՛ մեկ ցող երեսիցդ՝ որ ինձ կենդանացնի:

Ռուսական ժողովրդական երգի ոգով ու եղանակով գրված այս բանաստեղծությունը ապացույց է և ռուսական ժողովրդի երաժշտական կուլտուրային՝ Աբովյանի քաջածանոթ լինելուն, և ռուսական ֆոլկլորի նկատմամբ նրա ունեցած հետաքրքրությունը: Հիշյալ երգը ամփոփող № 63 տետրի համապատասխան էջերը մաշված են ու կեղտոտված, որը ցույց է տալիս, որ բանաստեղծությունը երգվել է:

1835 թ. հունվարին Պետերբուրգում Աբովյանը լսում է, որ հայրենիքից եկել է խոստումնալից երիտասարդ նկարիչ Ս. Ներսիսյանը, սակայն միջոցներ չունի սովորելու: Աբովյանը անմիջապես նամակ է գրում Ժուկովսկուն՝ խնդրելով օգնել ու աջակցել Ներսիսյանին Գեղարվեստների ակադեմիան ընդունվելու համար¹:

«Այս երիտասարդը իր բախտին արժանացած կլինի,—գրում է Աբովյանը Ժուկովսկուն,—եթե միայն կարողանա մտնել Գեղարվեստների ակադեմիա, և այն բարիքը, որ կստացվի Ձեր միջնորդությամբ, կծառայի հազարավոր մարդկանց օգտին: Իսկ Հայաստանը քիչ արտակարգ մարդիկ

¹ Աբովյան, Երկեր, հատոր I, էջ 108, նաև ԱՊԱ № 63, էջ 16—17:

² Ս. Ներսիսյանին Գեղարվեստների ակադեմիան ընդունելու առթիվ ԱՊԱ-ում երկու նամակ կա. մեկը ուղղված է հավանաբար Ս. Ֆրենին (№ 400), իսկ մյուսը (№ 401) մի «ամենաողորմած պարոնի»: Առաջին նամակում Աբովյանը գրում է, թե նույն խնդրի առթիվ ինքը նամակ է գրել նաև Ժուկովսկուն: Schukowski բառը սխալ կարդալու հետևանքով ստացվել է Շուկովսկի, որպիսի աղբյուրում ռուս նշանավոր մարզ չկա: Աբովյանը Schukowski է գրել, որովհետև գերմաներենում ժ տառ չկա: Դիվանի 2-րդ հատորի էջ 35—7 տպագրված նամակը, մեր կարծիքով, Ժուկովսկուն ուղղված նամակի սևագիրն է:

է ստեղծել, որոնց գործերը և կենսասպասկերը մի թիզ հողով է ծածկված, որովհետև այնտեղ ոչ ոք չի եղել, որ հավերժացնի նրանց անունները ապագա սերունդների համար: ... Թող չքնաղ մուսան ինձ ուժ շնորհի, որ նրանց արժանիքները լույս աշխարհ բերեմ. ես կարող եմ իմ մասին այնքանն ասել, որ նրանց բարեկամն եմ, իսկ նրանց կյանքը նկարիչը միայն կարող է պատկերացնել մեզ¹:

Թե ի՛նչ հետևանք ունեցավ Ժուկովսկու միջամտությունը, մենք չգիտենք, սակայն Ներսիսյանն ընդունվել է Գեղարվեստների ակադեմիա: Արուսյանը երկար մնաց Պետերբուրգում: Նա եկել էր երկու շաբաթով, սակայն մնում է հինգ շաբաթից ավելի: Նա շատ բան է սովորել այստեղ: Ընկերներից մեկին ուղղված նամակում Արուսյանը գրում է. «Այն օգուտը, փորձառությունը, որ ես ձեռք բերի ինչպես բարձրի, այնպես էլ անհատական կյանքին ու բնակարաններին ծանոթանալու իմաստով, չափազանց կարևոր է թե՛ ինձ և թե՛ ուրիշների համար²: Արուսյանը ավելացնում է նաև, որ ինքը Դորպատում անվստահությունամբ էր վարվում եվրոպացիների հետ. «Ես առանց հիմունքի չէի վարվում այդպես, որովհետև այն սակավաթիվ եվրոպացիները, որոնց տեսել էի մեզ մոտ, համարյա զգվանք էին զգում դեպի մեր սովորությունները: Պետերբուրգից, ռուս մարդկանցից, ռուսական կենցաղից ու հոգեբանությունից Արուսյանը շատ բան սովորեց, որոնք հետագայում աշխատում էր արմատավորել հայրենակիցների մեջ: Պետերբուրգյան այս օրերին է վերաբերում նաև Արուսյանի ռուսերեն լեզվով գրած մի բանաստեղծությունը, որը նվիրել է մեզ անհայտ մի կնոջ: Ոտանավորը թեև գրված է ոչ այնքան վարժ ու սահուն լեզվով, սակայն ինքնին հետաքրքրական է: Հենց միայն այն հանգամանքը, որ Արուսյանը ռուսերեն լեզվով էլ է ոտանավորներ գրել, պերճախոս փաստ է: Քանի որ տակավին անտիպ է այդ ոտանավորը, անհրաժեշտ ենք համարում ամբողջությունամբ մեջ բերել³:

Прощаюсь ангел мой! с тобой
Прощаюсь с счастьем моим.
Увы! Я принужден судьбой
Под сводом неба жить один.
Настал последний час разлуки,
Прости, душа моя, прости.
В печали, горести, муке
Я должен дни свои вести.
Заря меня не нарумянет
И солнце греть меня не станет.
Зарёю из глаз польются слезы
На сердце упадет туман.
Ночь целую томлюсь дыханием,
Любовь, ты злой сердец тиран,
На чтож нам боги сердце дали,
К чему ж увидел я тебя.

¹ Դիվան Խ. Արուսյանի, հատոր 2, էջ 36—37, նաև ԱԽԱ № 401:

² Նույն տեղում, էջ 38:

³ ԱԽԱ № 176. այս բանաստեղծությունը հիշատակել է նաև Ա. Ղուրբանյանը, սակայն որպես մեղ անհայտ որևէ ռուս գրողից արտագրություն, ինչ որ սխալ է: Սա Արուսյանի ինքնուրույն ոտանավորն է:

На то, чтоб дни текли в печали,
Чтоб вечно мучил я себя,
Любил, любить тебя век буду,
В какой бы не был я стране.
Тебя, о друг мой не забуду!
С тобою я рай везде сыщу.
И некогда ты может придешь
Искать меня среди могил,
Тогда на деле ты увидишь
Что я по гроб тебя любил!

1835 թ. փետրվարից — դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում՝ Աբովյանից շատ սակավ թղթեր են հասել, այնպես, որ դժվար է ասել, թե ինչ նոր երևույթներ երևան եկան նրա և ռուս կուլտուրայի գործիչների հետ ունեցած կապերի մեջ: 1836 թ. հունվարի կեսին Աբովյանը թողնում է Դորպատը և բռնում վերադարձի ճանապարհը: Մարտին նա Մոսկվայում էր, նա հանձնարարություն է ստանում կառավարությունից՝ հայտնել իր կարծիքը Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վիճակի և այն բարելավելու միջոցների մասին: Աբովյանը ներկայացրել է համապատասխան զեկուցագիր, որի գերմաներեն սևագիրը պահպանվել է նրա թղթերում և հասել է մեզ: Ջեկուցագրի հենց սկզբում Աբովյանը գրում է. «Իմ հայրենիքի ազատագրության միտքը պետք է ողջ կյանքիս ընթացքում խնդրությամբ ու շնորհակալությամբ լցնի իմ սիրտը և ջերմ մաղթանքներ ուղղվի Ռուսաստանի անհողորդության ու հարատևության համար...»¹: Այդ զեկուցագրում Աբովյանը անհրաժեշտ է գտնում Հայաստանի տնտեսական վիճակը բարելավելու համար զարկ տալ տեղում մետաքսի, բամբակի, ծխախոտի և բուսաներկերի արդյունահանմանը, իսկ ժողովրդի կուլտուրական վիճակի բարելավման համար՝ հիմնել Հայաստանում Մանկավարժական ինստիտուտ: Ինստիտուտում դասավանդվելիք առարկաների մեջ Աբովյանը առաջին հերթին նշում է մայրենի և ռուսաց լեզուները: Նկատենք, որ ներսեսին գրած նամակում ևս (1834 թ. հունիս), ուր Աբովյանը ներկայացրել է նրան հայ ժողովրդական դպրոցներ հիմնադրելու իր ծրագիրը, ընդգծված է այդ դպրոցներում ռուսաց լեզվի դասավանդման անհրաժեշտությունը, որպես միակ լեզվի, որի միջոցով կարելի էր ստանալ իսկական գիտություն ու լուսավորություն:

Ցարսկան կառավարությունը, ինչպես և ներսես Աշտարակեցին, չընդառաջեցին Աբովյանի լուսավորական ծրագրերին, քանի որ դրանք ելնում էին աշխատավոր ժողովրդի՝ գյուղացիության շահերից:

1836 թվականից Աբովյանը եղել է Մոսկվայի Բնախույզների կայսերական ընկերության անդամ, իսկ փոքր ուշ՝ Այգեգործական ընկերության թղթակից անդամ²: 1836 թ. հունիսին Աբովյանն արդեն հայրենիքումն էր, նա իր հետ բերել էր գիտելիքների վիթխարի պաշար, հայրենիքի և ժողովրդի համար անձնվիրաբար աշխատելու կամք ու եռանդ և լուսավորական-գեմոկրատական գաղափարներ: Աբովյանին սառն ընդունեցին: Ցա-

¹ ԱԽԱ № 49, էջ 1:

² Աբովյանի հիշյալ ընկերություններին անդամ լինելու փաստը առաջին անգամ հիշատակել է Ե. Շահազիզը: Տես գիվան Խ. Աբովյանի, հատոր 2, 1948 թ., էջ 155:

րական բյուրոկրատական չինովնիկությունը, կղերական սխոլաստիկները և հոգևորականությունը ամեն կերպ արգելակում էին նրա գործունեությունը: Արուսյանը սակայն չհուսահատվեց:

Հայրենիքում ոչ միայն չթուլացան Արուսյանի սերն ու հետաքրքրությունը ռուսական գիտություն ու կուլտուրայի հանդեպ, այլ, ընդհակառակը, ավելի ուժեղացան: Թիֆլիսի զավառական դպրոցում, ինչպես նաև Ներսիսյան Արուսյանը դասավանդում էր ռուսաց լեզու: 1837—1838 թթ. նա կազմեց Տապալեի օրինակով ռուս-հայերեն ընդարձակ քերականություն, որի նպատակն էր հեշտ եղանակով սովորեցնել ռուս մեծ ժողովրդի լեզուն հայ մանուկներին: 1838 թվականին ռուսերեն լեզվով նա գրում է թվարանության դասագիրք, որի երկու վարիանտները պահպանվել են իր արխիվում: Արուսյանը կազմում է ռուսերեն լեզվով ագրեջանական լեզվի համառոտ քերականություն, զանազան ուղեգրական և մանկավարժական աշխատություններ է գրում («Այց Անիի ավերակներին», «Երեք առեմոտյան իմաստուններ», «Ընդհանուր գիտություններ...» և այլն), որոնց ձեռագրերը պահպանվել են հեղինակի արխիվում: Արուսյանը աշխատակցել է «Кавказ» թերթին: Նա թարգմանել ու փոխադրել է նաև Կոխլովի մի շարք առակները, Կարամզինից ու Ժուկովսկուց բանաստեղծություններ և այլն:

Արուսյանը հատուկ սեր է տածել նաև ռուս մեծ գիտնական Լոմոնոսովի նկատմամբ: Երբ նա «Վերք Հայաստանի»-ի առաջին տետրակները կարդացել է իր բարեկամներից մեկին, վերջինս ոգևորված բացազանչել է. «Մեր հայ Լոմոնոսովը ծնվեց»: «Այդ նշանակում էր ճարճատաժ յուզի վրա ջուր լցնել, այնպես հանկարծ բոցավառվեցին իմ կենսական ուժերն ու հիշողությունը...», — գրել է Արուսյանը: 1841 թ. Արուսյանը ստեղծում է «Վերք Հայաստանի» պատմավեպը: Պարսիկների տիրապետությունից հայ ժողովրդին ազատելու գործում ռուս ժողովրդի խաղացած նշանավոր դերը, հայ ժողովրդի ռուսական օրինատացիայի և հայ ու ռուս ժողովուրդների մշտական բարեկամության զաղափարները միշտ էլ ոգևորել են Արուսյանին: Այդ մասին Արուսյանը արտահայտվել է մի շարք անգամներ, իսկ «Վերք Հայաստանի»-ի մեջ՝ ամենից ավելի: «Վերք Հայաստանի»-ի մեջ հայ մեծ լուսավորիչը խստորեն քննադատում է ամերիկյան զաղութարարներին, որոնք կարճ ժամանակամիջոցում ոչնչացրին Ամերիկայի հին բնիկներին, իսկ երախտանքի խոսք է ուղղում ռուս ժողովրդին, որը հայ ժողովրդին ազատեց բարբարոսների տիրապետությունից: 1841 թ. գրած մի նամակում, հիշելով Հայաստանի փրկության գործում ռուս ժողովրդի օգնությունը, Արուսյանը նրան անվանում է «Մեր հրեշտակ փրկիչ ռուս ժողովուրդը»: «Վերք Հայաստանի»-ի վրա մենք կանգ չենք առնի, քանի որ Արուսյանի ժառանգությունն ուսումնասիրողները ամենից ավելի գիմել են դրան, նրա «Չանդի» հավելվածին և բազմաթիվ էջերից ցիտել:

Մի հետաքրքիր փաստ մեզ հասել է 1842 թվականից: Պահպանվել է ոմն Ա. Բվանովի պատասխան նամակը, որից իմանում ենք, որ 1842 թ. հունիսի 29-ին վերջինիս գրած իր նամակում Արուսյանը որոշ հանձնարարություններ է տված եղել նրան, կապված «Отечественные записки»

¹ Դիվան Պաշտոնը Արուսյանի, հատոր առաջին, էջ 214:

ամսագրի հետ: Ճիշդ գրում եմ Դուք լիովին վստահ լինեք,—գրում է Իվանովը Արուստանին,—որ ես կկարողանամ լիովին արդարացնել «Отечественные записки» և մյուս ամսագրերի հանձնարարությունը¹: Թե ի՞նչ է եղել այդ հանձնարարությունը, դժվար է ասել: Պարզ է մի բան: Արուստանը կապված է եղել «Отечественные записки» ամսագրի հետ. և այն էլ մի այնպիսի շրջանում, երբ վերջինս՝ շնորհիվ Բելինսկու մասնակցության, իր ծագումն էր ապրում: Այնտեղ էին տպագրվում Բելինսկու և Գերցենի նշանավոր հոգիածնները, որոնք խոշոր դեր են խաղացել Ռուսական հասարակական մտքի պատմության մեջ:

Հետագա ժամանի համար կցկտուր են մեր ունեցած տեղեկությունները: 1844 թ., երբ մեջտեղ է գալիս «Անմահ Կոխովի» հուշարձանի խընդիրը, Արուստանը ոչ միայն իր ոռճիկից գումար է հատկացնում, այլև առանձին էլ փող է նվիրում²:

1845 թ. հունվարի 20-ին Արուստանը դիմում է ներկայացնում Անդրեևիչի կառավարչապետին՝ խնդրելով թույլ տալ իրեն՝ աշակերտների հետ միասին Պետերբուրգ մեկնելու: Անշուշտ, Արուստանի ցանկությունն է եղել աշակերտներին տեղում ծանոթացնել Ռուսական կուլտուրայի նշանավոր հուշարձանների հետ, Ռուս ժողովրդի կյանքին ու կենցաղին: Ասկայն նրան չեն ընդառաջում: Արուստանը մերժում է ստանում: 1846 թ. հոկտեմբերին, նա թողնելով դպրոցական պարտականությունները, առանց դպրոցական մասի իշխանավորներից թույլտվություն վերցնելու, ուղեկցում է Ռուս գիտնական և ճանապարհորդ Մուրավյովին, որի համար հանդիմանություն է ստանում: Այդ մասին Անդրեևիչի պարոցների վերատեսչությանն ուղղված զեկուցագրի մեջ Արուստանը գրել է. «Ես կամերհեր պ. Մուրավյովի անձնական խնդիրքով հարկադրված էի ուղեկցել նրան Հայաստանի մի քանի հնությունների տեղերը շրջագայելու»:

Թե թիֆլիսում և թե Երևանում ապրած տարիներին (1836—48 թթ.) Արուստանը հետևում էր Ռուս գրականության նորություններին և պարբերաբար գրքեր պահանջում Պետերբուրգից և Մոսկվայից:

Իր ամենավերջին աշխատության՝ «Այց Անիի ավերակներին» ուղեգրության մեջ ևս (գրված 1847 թ. նոյեմբերին) Արուստանը կրկին ու կրկին իր երախտանքի խոսքն է ուղղում Ռուս ժողովրդին, հայ ժողովրդի պատմության մեջ նրա շնորհիվ կատարված մեծագույն շրջադարձի համար և փառաբանում է Հայկի և Ռյուրիկի թոռների հավիտենական ու անքակտելի բարեկամությունը:

¹ Դիվան Խաչատուր Արուստանի, հատ. 2, էջ 168, նաև ԱԽԱ № 264:

² Դիվան հատ. 1, էջ 123. Նաև Արուստանի արխիվում չցուցակագրված ֆոտոլուսանկարների մեջ նվիրաբերողների ցուցակը:

³ Դիվան, հատ. 1, էջ 219, նաև ԱԽԱ № 270:

⁴ Զարմանալի է, որ և Ինչ Մամիկոնյանը («Սովետական գրականություն» 1943 թ. № 4—5, էջ 195—7), և նրան հետևելով Ե. Շահադիզը («Ն. Արուստանի կենսագրությունը» 1945 թ., էջ 190) և վերջապես Ենիկոյունյանը (Հայկական ՍՍՌ ԴԱ Տեղեկագիր, 1951 թ. № 2, էջ 83 և այլն), նորություն են համարել Արուստանի Մուրավյովին ուղեկցած լինելու փաստը: Նրանք հենվել են Մուրավյովի «Грузия и Армения» գրքի վրա, անտեսելով Արուստանի ձեռքով գրված փաստաթուղթը, որը 1940 թ. Դիվանի առաջին հատորում տպագրվելուց առաջ (էջ 177), գեղ. 1928 թ. թարգմանված է եղել Ե. Շահադիզի կողմից: Տե՛ս ԱԽԱ № 508, փաստաթուղթ № 55:

Ինչպես երևաց բերված մի շարք փաստերից, Արովյանի մեջ սերն ու հետաքրքրությունը ուսական կուլտուրայի նկատմամբ եղել է զեռ պատանեկան տարիներից։ Հետագայում, ինչպես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելու և էջմիածնում որպես թարգման աշխատելու, այնպես էլ Դորպատում սովորելու տարիներին նրա կապերը ուսական կուլտուրայի ու գործիչների հետ ավելի են սերտանում։ Նրա գիտելիքները ուս ժողովրդի ստեղծած հարուստ կուլտուրայի մասին, ավելի են հարստանում ու բնագործակվում և նրա հետաքրքրությունը ուս ժողովրդի գեմոկրատական կուլտուրայի նկատմամբ ավելի է խորանում ու բազմապատկվում։ Ռուս գրականությունն ու արվեստը Արովյանի համար եղել են ստեղծագործական կարևոր ազդակներ։ Մինչև իր կյանքի վերջն էլ Արովյանը հիացմունքով է վերաբերվել ուս ժողովրդի ստեղծած առաջավոր կուլտուրայի նկատմամբ, սովորել է նրանից, և աշխատել է տարածել այն իր ժողովրդի կյանքի և կուլտուրայի մեջ։